

# ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ, 19 ՄԱՅԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

## ՆՈՐ ԱՐՇԱԿԱԻԱՆԸ

Շիտակն ըսելու համար այս միջոցիս շատ հպարտ չեմ Ալեքսանդրիոյ հայ գաղութին մասը կազմելուս համար, ո՛չ ալ իմ ընտրուի ե՛ հետեաբար՝ ընտրելիի դիքքէս. չէ թէ միայն հպարտ չեմ, այլ պարզապէս ամօթ կը զգամ կոր...

Յորմէյետէ ինստակալութիւնը տապալեցաւ և նոյր ազգային իշխանութեան մը ընտրութիւնը մօտալուտ իրականութիւն մը պարձաւ, կարգ մը մարդիկ մէջտեղ ինկած, լալիան և յուսահատ գէմքով մը, սա տկասի խօսքեր մը սկսան փսփօալ:

— Սահմանադրութիւն, շատ ազգեր, չատ ազեկ, ես ալ կ'ուզեմ սահմանադրութեան գործադրութիւնը, արդէն ո՞վ չուզեր որ սահմանադրութիւնը չգործադրուի, ամէնքս ալ կ'ուզենք, կը փափաքինք, միայն թէ ո՞վ պիտի ընտրենք, որո՞ւ պիտի յանձնենք կալուածները, հոգեզր, եկամտոնները... քիչ բան չէ, ազրար, երկու հարիւր հազար ոսկիի հարստութիւն է, որո՞ն կ'ընանք վստահիլ, մարդ չի կայ ազրար, մարդ չի կայ... որո՞ն վստահիլ:

Այսպէս ո՛րի՞ն, ըսա այլ կարգ մը մարդոց խօսքին, մօտաւորապէս երեք հազար հոգիէ բաղկացած Ալեքսանդր-իոյ հայ գաղթականութեան մէջ կարելի չէ բանի մը պարկեշտ մարդ գտնել, ազգային իշխանութեան գլուխը գնելու համար. այսպէս ո՛րի՞ն Ալեքսանդրիա նոր Որչակաւան մընէ ո՛ր եկած իրար գտած են բոլոր հայ աւագակները, գողերը, խաբերանները, ոճրագործները, տղանհրոյնները՝ խաչագոյները, առաւ փախտանները, ու բոլոր գաղթականութեան մէջ պարկեշտ մարդ բլլալով երեք հոգի կան միայն, Յակոբ Ռիդուրեան, Չաքէեան և Բարթող փաշա, որոնք մեր ձեռքովը դուրս նետեցինք Առաջնորդարանէն:

Իրաւունք չունի՛մ հիմակ երբ ամօթ կը զգամ Ալեքսանդրիացի բլլալուս:

Եւ մինչ շատեր այլ խօսքերէն ազգուելով շուարեք մնացեր էին թաղական խորհրդի համար եօթը մարդ գրտնելու, այժմ ընտրողական ժողովը և Առաջնորդը որոշասկուտան փոխանակ թաղ. խորհրդի Երեսփոխանական ժողով մը ընտրել քսանըմէկ հոգիէ բաղկացած, այնպէս որ շուարած մարդոց շուարումը երեք անգամ աւելցած է այս միջոցիս:

Այդ շուարածներէն մին երէկ սա զիտողութիւնը կ'ընէր ինձ

—Եղբայր եթէ միայն եօթը հոգի ընտրէինք, գոնէ երկու հարիւր հազար ոսկիէն ամէն մէկուն 25714 ոսկի բաժին մը պիտի իյնար և Ալեքսանդրիոյ մէջ բէշ շատ հարուստ հայ եօթը հատ աւելի պիտի գտնուէր մինչդեռ հիմակ Երեսփոխանական ժողով մը պիտի ընտրենք Չ հո-


գիւ թաղկացած, այլ Երեսփոխանական ժողովը Քաղաքական ժողով մը պիտի ընտրէ 12 հոգիէ կազմուած, Քաղաքական ժողովը պիտի ընտրէ կալուածոց հոգաբարձութիւն, եկեղեցւոյ մատակարարութիւն, զպրօցի և Աղբտախնա՛ի հոգաբարձութեւն առնս ազն երիբական անպա՛մէ թաղկացած, ուրե՛նն այս հաշիւով 45 հոգի պիտի անցնին իշխանութեան գլուխը և ամէն մէկուն հազիւ 4444 ոսկի բաժին պիտի իյնայ երկու հարիւր հազար ոսկիէն:

— Քանի որ այդպէս է, պատասխանեցի ես ալ չափազանց յօւրած, լատագոյն է սա երկու հարիւր հազար ոսկին երեք հազար Ալեքսանդրիացի հայերուս մէջ բաժնել, ամէն մէկերնուս 66 ոսկի և 66 զր. ողջ բաժին կ'իյնայ, կալուածներն ու եկամտոններն գողցնելու հոգէն ալ կ'ազատինք և գողնալիք բան մը չը մալով, ամէնքս ալ կը դառնանք կ'ըլլանք պարկեշտ քաղաքացիներ, Յակոբ Ուղուրեանի մը չափ և դուցէ քիչ մըն ալ աւելի...

Ու շուարած մարդը քովէս հեռացաւ միշտ բլթին սակէն կրկնելով.

— Աղբար մարդ չիկայ, որո՛ւ յանձնել, որո՛ւ վրստահիլ:

Ազապա մըն ալ ա՛յս արդեօք...



## ՀԵՌԱՆՈՐ ՄԻԹԻՆԿ ՄԸ

Յանուն անկողմնակալութեանը կը հրատարակենք հետեւալ նամակը զոր պատահական թղթակից մը զրկած է մեզ ճիշտութիւն, Մայիս 7 թրականսոք:

«Վերջերս քաղքիս հայ գաղութին մէջ խնդիր ծագած էր սա հարցի մասին թէ՛ ԱԶԱՏ ԽՍՍԲ չկաթղացող Հայր կրնայ իբր գիտակից և կատարեալ մարդ համարուիլ և ըստ այնմ ընդունուիլ ընկերութեանց մէջ: Միանգամ ընդ մեզս վերջ մը սալու համար գանազան թիրիմացութեանց, որոշեցինք միթինկ մը կազմակերպել երէկ երեկոյ, կիրակի, Մայիս 6ին:

Միթինկը տեղի ունեցաւ ի ներկայութեան հոժ և ընտրեալ քաղմութեան մը, որուն մէջ կը նշմարուէին գաղութիս գրեթէ բոլոր ընտանիքները: Բացումը կատարուեցաւ ԱԶԱՏ ԽՍՍԲ ի ձօնուած երգով մը զոր ներկաները ստնկալլ մտիկ ըրին, ժողովարահին մէջ նստարան չըլլալուն համար: Վկա հետզհետէ խօսք առին Տ, Ղալար Յարութիւնեան, Տիկին Արաքսի Եագութեան, Տ. Մկրտիչ Կարապետեան և գեղեցիկ պերճախօսութեամբ մը որուն միացած էին պատմական, իմաստասիրական և ընկերաբանական անհրճելի ապացոյցներ, հաստատեցին թէ՛ ԱԶԱՏ ԽՍՍԲ չկարղացողը ո՛չ թէ միայն կը կորսնցնէ գիտակից և կատարեալ հայ մարդու խմորը, այլ նոյնիսկ անոր ժանն կը դաննայ մարդկային բանաւորութեան: Երեք բանախօսներն ալ ամենարուսն ծափերով և խանդավառութեամբ ողջունուեցան: Տիկին Արաքսի Եագութեան կար-


գապիր մասնախմբին կողմէ գեղեցիկ ծաղկեփունջ մը բն-  
 ցունեց:

Նախագահը ըսաւ որ եթէ ընդդիմախօս մը կայ ներ-  
 կաներուն մէջ հաճի բեմ ելլել: Ողորմելի պարտն մը, ո-  
 րուն անունն իսկ տալ չարժեր, ոտքի ելլելով փորձեց քա-  
 նի մը անխմաստ ու անկապակից ապաշարանութիւններ  
 կրմկըմալ, որոնք ամէնուն կողմէ ծաղրական սուղօմներով  
 ընդունուեցան: Ռիշ Խօսք անուոյ չըլլալով՝ նախագահը  
 քանի մը յուզեալ մայթանքներ ուղղեց ԱԶԱՏ ԽՕՄՔ ին  
 և հետեւալ որոշմագիրը ներկայացուց միթիւնիկն հաւա-  
 նութեան:

« Ճիպովի հայ զաղթականութիւնը միթիւնի կուժա-  
 րուելով կ'որոշէ գիտակեց և կատարեալ Հայ չճանչնալ  
 ամէն անոնք որոնք ԱԶԱՏ ԽՕՄՔ չեն կարգար: »

Սոյն որոշմագիրը, հարկ չի կայ ըսելու, մէկի զէմ  
 միաձայն հաւանութեամբ ընդունուեցաւ: Վերջին պահուն  
 կ'իմանանք թէ ընդդիմախօս ողորմելի պարտն արդէն եր-  
 կար ատենէ ի վեր մտային խանդարման ենթարկուած է  
 եզեր: »

(Ծ. Խ.) — Այս նամակին մասին մեր կողմէ որ եւ  
 մեկնութիւն աւելորդ կը չամարինք: Գալով ընդդիմախօս  
 ողորմելի պարտնին՝ մեր պատահական թղթակցին վկայու-  
 թեան պէտք չունէինք կասկելու համար թէ կատարեալ  
 յիմար մը ըլլալու էր ապուշով մը կրկնապատկուած: Եր  
 խղճանք իր վրայ:



ԻՆԹԵՐՎԵՍԻ ՄԸ

**ԱԶԱՏ ԽՕՍՔ** Ի Խ՛րադիրներէն Խղճուի պաշտօնական տեսակցութիւն մը ունեցած է Ա. դերմանդրիոց ընտրուական ժողովոյ անկամ եւ օրինասիրութեան ու սահմանադրութիւնասիրութեան փերջապահ գտնդին պետ, Տ. Արմենակ Կամսարականի հետ, որուն, նորէն պաշտօնապէս, շատ խորունկ շնորհակարութիւններ կը յայտնենք, իր անձնական գրադամներէն պահ վը, պահիկ վը ժամանակ գողնալով, մերներկայացուցչին պատասխանել հաճած ըլլալուն համար:

Արախչին գլխարկով կայտառ սենեկապանը մտցոց գիտ, խոնարհ լրագրողս, Տ. Կամսարականի ազգային գործերու աշխատանոց սենեակը: — Կանաչ, ամենապարզ սեղան վր, վրան դէս ու դէն նետուած բանի վը պրօշիրներ, Պերլինի Դաշնագրութիւն, Փորթսմութի Ռուս եւ Ճարմական Դաշնագրութիւն, Թիֆլիզի Հայ — Թաթարական հաշտութեան պայմանագիր, պատմութիւն Լուի ժՁ. Ի փախուստին, Սահման Թաղական Խորհրդոց գործառնութեան, Նիզամադէի Միլլէթի էրմէնեան, կամ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, իսկ շուրջը պատերուն վրայ, կը տեսնէք դուք իւրաներկ նկարները մեծ քաղաքագէտներու, Թիէռներու, Պիզմարքներու, Միրապոներու եւ Բաւլորներու, մինչ անոնց առջև ոսկեզօծ ընկուզեայ հրաշալի էվաճաններու վրայ կիսարձանները հայ պահպանողա-

Կանտիժեան բոլոր անդրանիկ աս յեսասնաց հերաներսն,  
 Մերէ՛ք լին Վինչե Չերագ, աս Բարո՛թին պատրիարքն  
 մինչև Նոքեանս

Ու ամէնը ասորանս—

Շուտով եկաւ Տ, կամօտարական, անգամ Աղերան-  
 գրիոյ ընտրողական ժողովին և վերջապահ զնգապետ Օրի-  
 նասերութեան ու Սահմանադրութիւնասիրութեան, և շատ  
 սիրալիր ձեռնասեղմուե՛լ Վրչետոյ, որմէ—մինչև աս վայր-  
 կեանս զգածուած եմ. անցաւ իր գրասեղանին առաջ,  
 ու անգամ Վրն ալ աչքերը պտտողոց այցաբարտիս վրայ՝  
 ցոր կանխաւ ներս դրկած Վի սպասուարին հետս —

Խ Ղ Ճ Ո Ւ Կ  
 Խմբագիր Ազատ Խօսք Ի  
 Ազեխանդրիա

Եւ Տ. կամօտարական հասկցաւ — Ես ալ հանկցայ  
 ար իր տանջուէք կոր նստած տեղը, տակաւին ես բերաւ  
 նրո չրացածս—

— Աերջապե — ընի — Տ. կամօտարական — լռու-  
 թիւնը իղելու համար. գիտէք անչո շատ պատճառ որուն  
 համար տարուեցայ կա՛մ, ինչ և է, երկուքն ալ Չբանսե-  
 րէն է, կա՛մ այժ, բերուեցայ խնդրելու Չեզ՛մ ինձըվիս-  
 ժը..

Տ. կամօտարական պատասխանեց.

— ....

Խնդրին կենսական պարտզան անշուշտ ինձի եւ պատկանած թերթիս համար չէ դիմնալը թէ որքան սերտ աննշտ թիւններ կան Հայոց սահմանադրական իրութանցումին մէջ, Արապայի ծանր խնդրին, Տարբանի եւ Չուլալանտի բնիկներու ըմբոստացումին եւ Քահանայ Կարոնի կախաւելուն միջեւ, անորոց բացատրութիւնները չուտով կատայ անշուշտ մեզի իր խորագրակամներով հայ կիսաշարակաթերթը որ աս շարթու Գալիլէ փոխադրուեցաւ, ու աս առթիւ նպատակնիս վեր հանել չէ նաեւ տարբերութիւնները որո՞ք կան Ազգս կոչուող երկու թերթերուն, Բեւին ու Խօսի՞ն միջի, որոնցմէ մինչդեռ առաջինը ինք կ'երթայ խմբադրին ետեւէն, երկրորդին մէջ՝ խմբագիրը կ'երթայ թերթին ետեւէն: Ասոնք չեն մեզի համար կարեւորները, այլ դիմնալ թէ ինչո՞ւ համար սահմանադրական մեծ միթիւնկին օրը, անոր հետեւեալ օրը, ու մանաւանդ ընտրողական ժողովին առաջին նիստին օրը անձրեւ եկաւ..... ու ինչու այդ անձրեւներէն ալի պէս հալեցաւ թաղական խորհուրդի դադարաբարը, եւ Ղովտի կնկան արձանին պէս ցցուեցաւ գաւառական երեսփոխանական ժողովի մտածումը.....

— Աւ Տ. Կամսարական բերանը բացաւ:

— Գիտէ՞ք որ իբր անձ պաշտօնական մի բիչ դժուար է ինձի համար լիւրի պատասխանել ձեր հարցումներուն, մտմուռնոց ձեր մտտնանշած անձրեւներու մասին, որոնց նկատմամբ Ընտրող սկան ժողովս ժողովակամներէն Տ. Լեւոն Մկրտիչեանի առաջարկութեամբ որոշած է որ եւ է բան չհաղորդել մամուլի ներկայացուցիչներուն Բայց՝ գաղտնի միւս պարագային, եւ արտօնուած եմ բոլոր ժողովակամներէն (ի բաց ասնելով Տ. Շնորհքեանը) ձեզի յայտնելու որ ժողովս շատ դժուարին ու կրճատ հարցի մը առջեւ կը դռնուէր. ժողովս, լուս մտիկ ըրիք վեր թուքնէր՝ Դաշնակցականներն էին, վար թուքնէր՝

Վերակազմեալներն էին. զէսի աջ թաղերն, Մեծ ազաջն էին. զէսի ձախ թաղերն էր Բարձրագետներն էին: -- Ահա որ էր կացութիւնը ասանկ: Պահանջներ կային ամէն կողմէ: Երաժիշտներ, Պետրոս Պէրպէրեանի պէս. պահանջներ ունէին: Զբլլալիք բան էր. -- սնտափառութիւններ կային ամէն կողմէ: Խենդենալի՛ք բան էր: -- Ու նկատելով որ.....

-- Այո՛, այո՛,.....

-- Նկատելով որ թաղական խորհուրդէ մը պահանջուած թիւը, 7, շատ տնրութեան էր յազեցում տալու բոլոր՝ գողութիւնները երեւան հանելու կարօտութենէն առաւարտ բոլոր ատ հիւանդներուն, ժողովս պաշտօնապէս, սէկի զէմ 15 ձայնով որոշեց որ, փոխանակ թաղական խորհուրդի ընտրենք գաւառական ժողով 85 անդամէ. ատ 85 հոգիները ընտրեն թաղական խորհուրդ, ուսումնական խորհուրդ, կալուածոց վերատեսչութիւն, ելեւտից տեսչութիւն ու տակաւին շատ մը տեսչութիւններ որոնք կարենային գոհացնել ամէնքը:

Ներեցէք որ հաս զնեմ խօսքիս վերջակէտը.

Ասկէ աւելին յուսախաբ պիտի ընէր՝ ձեզ և ժողովուրդը:

-- Յուսախաբ, -- մտածեցի. - Ըհը՛. - աղօտ էր ատ բառը, և հրաժեշտ տուի Տ. Կամսարականէն, որ, վստուան եմ, զուրս ելլելուս պէս խնդալ սկսաւ ետեւս:

ԱՒԵԱԶՆՈՐԿԱՐԱՆ, ՀԱՅՈՑ

Աղեքսանդրիոյ

Ս. դեբտ. 16 Մայիս 1906

ՊՈՇՏՈՆԱԿԱՆ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Ընտրողական ժողովը պատիւ տնի ժանուցանել արգոյ հասարակութեան թէ՛ որչափ որ ի սկզբան որոշուած էր Թաղական Խորհրդոյ ընտրութեան ձեռնարկել, բայց ընտրողական ժողովի անգամներուն միաձայն որոշմամբ, Գերապատիւ Առաջնորդ Հօր եղած զիմուսին վրայ, Նորին Գերապատուութիւնը հրաման ըրաւ որ, Օրէնքին անթերի գործարկութիւնը ապահովելու համար, նախ և առաջ ձեռնարկուի Գաւառական Ընդհանուր ժողովոյ ընտրութեան:

Ըստ այնմ Գաւառական ընդհանուր ժողովոյ ընտրութիւնը պիտի կատարուի առաջիկայ 14|27 Մայիս 1906 կիրակի օր:

Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը պիտի բաղկանայ Չ անձերէ որոնց 3ր եկեղեցական, իսկ Մնացեալ 18ը աշխարհական ազգայինները պիտի ընտրուին ժողովրդեան բռնով:

Ընտրոյ են ամէն անոնք որ 25 տարին լրացուցած են, պայմանաւ որ ըստ տեղական ընկալեալ սովորութեան, եթէ առանձին են՝ 5 տարիէ ի վեր, իսկ եթէ ընտանեօք են՝ առ նուազն 3 տարիէ ետեւսս հաստատուած ըլլան և իրենց վերջին բնակավայրն ալ Աղեքսանդրիա ըրած:

Ընտրելի են այն ազգայինք որ 30 տարին լրացու-

Յաճ են, ժողովի օրերը զիրութիւն ունին ներկայ գտնուելու, կարգալ զրել գիտեն և տեղական ազգային գործոց հմուտ անձինք են:

Ընտրուներու անուանց ցանկը Մայիս 13ի Կիրակի օրէն եկեղեցւոյ պատէն կախուած կը մնայ ի տես ժողովրդեան:

Անոնք սր բոս օրինի ընտրողի իրաւունք ունին և իրենց անունը չ'են գտներ այդ ցանկին մէջ, իրենց ընտրողական հանգամանքը հաստատելու և իրենց անունը այդ ցանկին մէջ արձանագրել տալու համար՝ կրնան դիմել Ազգային առաջնորդարան՝ ուր ընտրողական ժողովոյ անդամները ներկայ պիտի գտնուին ամէն օր կէս օրէ վերջը ժամը Զէն մինչև 4, ինչպէս արդէն եկեղեցւոյ բեմէն յայտարարուածին համաձայն Մայիսի 11էն ի վեր ամէն օր կը կատարուին ընտրողական արձանագրութիւնք և պիտի շարունակուին մինչև շաբաթ օրը, 13|26 Մայիսի, երբ ընտրողաց ցանկը վերջնականապէս փոխուած պիտի համարուի Քուէրիութիւնը պիտի սկսի հետեւել օրը, Կիրակի՝ 14|27 Մայիսին, Առաւօտեան ժամը 8-ի կէսին:

Ամէն արձանագրուած ընտրող առանձին նամակով պիտի ընդունի երկրորդ յայտարարութիւն մը՝ քուէրիութեան վերաբերեալ պէտք եղած տեղեկութիւններով և մանրամասնութիւններով:

Կը հրախրուին բոլոր պարտաճանաչ ազգայինք աւանդան կարգապահութեամբ և օրինաւորութեամբ կատարել իրենց ընտրական պարտականութիւնը:

Նախագահ Ընտրողական Ժողովոյ  
Ռուրիկն Քանսուայ Գաբրիէան

ՍՈՉԵՌԻ, ԼՈՒՐԵՐ

Առաջնորդ հայր սուրբին հիւանդ տեսի  
դացող մը.

—Չե՞րքերնուս ի՞նչ կուգայ, հայր սուրբ. աղօ-  
թենք որ Աստուած աս անառակներուն քիչ մը  
շնորհք տայ:

Հիւանդը դող ելած, խեղճուկ ձայնով.

—Ախ, օրհնած, բերանդ խեր բաց. ունե-  
ցածնին ձեռք չի՞տար:

✠ ✠

✠

Փափկանկատն Աղանունի հայր սուրբը, իր  
թեմական Առաջնորդի իշխանութեամբ, Աղեք-  
սանդրիոյ եկեղեցական դասուն պատուիրած է  
որ, Բարթող փաշա և ընկերք երբ ժամասացու-  
թեան ներկայ գտնուին, «շնորհք» բառը չարտա-  
սանուի: Ո՛չ աղօթքի մէջ պէտք է ըսուին, ո՛չ  
երգեցողութեան մէջ պիտի հնչուի, նուիրա-  
գործուած ասացութիւնները:

Շնորհօք Սուրբ Հոգւոյն.

Շնորհք Տեառն մեր եղիցի ընդ ձեզ և ընդ  
ամենեսեանդ.

Շնորհք, Սէր, և ողորմութիւն.

Շնորհեա, Տէր և ողորմեա՛

այլ՛

Պարքեւօք Սուրբ Հոգւոյն.

Պարբեւ Տեառն եղիցի ընդ ձեզ եւ ընդ  
անմենեսեանդ.

Պարբեւ, սէր, և ողորմութիւն.

Պարբեւեա՛, Տէր և ողորմեա.

Վերջին թամոն կ'իմանանք թէ ընտրուցու-  
կան ժողովք իր գիշերային նիստերէն մէկուն  
մէջ՝ որոշած է ընտրուց և ընտրելի շճանշնալ բու-  
ջոր անանք որոնք «ԱՁԱՏ ԽՕՍԲ» շեն կարդար.

Յանուն անկողջնակալութեան կը հարցնենք  
թէ Սահմանադրութեան ո՞ր յօդուածին վրայ  
յենլով այդ որոշումը գրուած է.

### ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ԼՈՒԻՐԵ

Խիար Յ. Ուլուրեան հայատա և տաճկարարբա  
քառորդ պաշտօնական գրութիւն մը ուղղելով Ընտրողական  
ժողովին, որ այժմ փոխուած է Assemblée consti-  
tuanteի, թախանձագին խնդրած է անկէ որ իր ա-  
նունը իսպառ ջնջուի եռապատիկ քնարելեաց ցանկէն.

Տիար Ուլուրեան երկարօրէն լծուելէ յետոյ իր մա-  
տուցած ծառայութիւններն առ ազգն կամ Վսեմ. Բարժոյ  
փաշա, կը խնդրէ որ խնայուի իր աւազուտ կազմուածքին  
արդէն այնքան խարխլած վերջին ժամավրդաշարժէն, և մի  
քանի տարի զինքը զերծ կացուցալնն օ՛ր և է ազգային  
կամ հակազգային պաշտօնի մը պատուակալ բեռնակրու-  
թեանն.

Համակրելի նամակագիրը կը յաւելու թէ իր այս պարագայովը պիտի նո իրէ գրական երկասիրութեան մը որուն գեւ արբունքի չի հասած կոյս գազափարը կը զգուէր ի վազուց անտի: Իրական կեանքէ քաղուած վէպ մը, կ'ըսէ մեծ վստարեալը, ուր երեսնամեայ ամէն իմաստներով գործօն՝ յոյժ շահեկան և արկածալից կեանքի մը անէկոտթիկ պատմութիւնը պիտի ըլլայ հետեւեալ թեւազրիչ տիպոսին ներքե՛

**Էսրաբը Մըսրէ**

կամ Գաղտնիք Եղիպտոսի:

Այս գրքին հրատարակման համար վսեմ, Բարձրոյ բաշա, որուն ձօնս ամ է ան, — 40 ոսկի տրամագրած է, և հասոյժը պիտի յատկացուի անչափահաս և անոք ազջիկներու զպրոցական առողջապահական գաստիարակութեանը:

**ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ**

ԱԶԱՏ ԽՅՍՔ ի ամիսէ մը ի վեր կանոնաւոր հրատարակուած անշուշտ մեր ընթերցողներուն համար բաւական երաշխաւորութիւն մըն է թերթին յարատեման մասին, այսուհանգերձ պարտք կը զգանք անգամ մը ևս յայտարարելու սր ԱԶԱՏ ԽՅՍՔի ապագան ամէն կերպով ապահովուած է և թէ հետզհետէ թէ տպագրութեան և թէ պատկերներու նորանոր կատարելութիւններ պիտի կրէ:

Այս զոհողութեանց յանձնառու կ'ըլլանք վստահ ըլ-

լայով որ մեր բաժանորդներն ալ պիտի ճանչնան իրենց պարտականութիւնը և պիտի հաճին առանց յ. տարութեան կամ առարկութեան վճարել իրենց բաժնեզինքը ամէն անգամ որ մեր հա աքիչը ստացագիրն ի ձեռին ներկայանայ:


Կանոնաւոր վճարոց բաժանորդները միայն իրաւունք ունին թերթի կանոնաւոր հրատարակուած պահանջել, ըստ և թայմի թերթին հիմնադիրը:

Եզրպահայ գաղութը որ Օրէնքի և Սահմանագրութեան իր տաճած ջերմ նախանձանդութեան այնքան փայլուն ապացոյցները ստաւ, պէտք է գիտնայ ինչ Սահմանագրութեան՝ առաջին յօդոսմն և հետեւեալը:

Ամէն անհատ պարտականութիւններ և իրաւունքներ ունի առ ազգն և փոխադարձաբար ազգն ալ պարտականութիւններ և իրաւունքներ ունի առ ամէն անհատ:

Սյտինքն թէ՛

Ամէն բաժանորդ պարտականութիւններ և իրաւունքներ ունի առ թերթի և փոխադարձաբար թերթին ալ պարտականութիւններ և իրաւունքներ ունի առ ամէն բաժանորդ:



“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, ՉԵՌԻԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒՄԻ

Արեքսանդրիայ՝ Տ. Յ. Ղազիկեանի ջրով և Եւրիֆ փաշա լրագրավաճառ Տ. Թեյլալեանի խանութը.

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կոլաթն Բիւրջի ջրով և « Լուսաբեր » թերթի ջրով ինչ ձևով:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կրկին գինով:

“ ԱԶԱՏ ԽՕՄՔ ,, Ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՄՔ - ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲԱԾ ՕՐԵՐԸ  
Եզիպտոսի համար բաժնեգրին է

40 ԹԻԻԸ                      40 ՂՐԵ. ՈՂԶ  
20                                      20                                      ”                                      ”

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն

ԵՒՐՈՊԱ	40	ԹԻԻ	10	ՏՐԱՆՔ
ՌՈՒՍԻԱ	”	”	4	ԲՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	”	”	2	ՏՈՒԱՐ

Բաժանորդագրուքիւնը կանխիկ  
ՀԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂԶ

“ ԱԶԱՏ ԽՕՄՔ ,, Ի համար բաժնեգրին կամ  
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-  
տեւայ հասցէին”

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, ( EGYPT )

Մանուցումներ կրնդունուին մասնաւոր  
պայմաններով:

Պատասխանատու - Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փոքր. Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա